

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

24.05.2019

Նախքան օրակարգի հարցերին անցնելը ռեկտոր պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը շնորհավորեց Գ.Մ.Սահակյանին հոբելյանի կապակցությամբ, ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը խորհրդի կողմից շնորհավորեց Մ.Բարբարյանին ձյուդո վետերանների չեմպիոն դառնալու կապակցությամբ:

Օրակարգ`

1.2018-2019 ուստարվա մանկավարժական և կլինիկական պրակտիկայի և մագիստրանտների գիտամանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:

(Զեկ.՝ Պրակտիկայի և կարիերայի բաժնի պետ Մ.Բարբարյան)

2.2019թ. ընդունելության քննությունների հանձնաժողովի աշխատանքների մասին:

(Զեկ.՝ պատասխանատու քարտուղար, պրոֆեսոր Կ.Բաբայան)

3.Գիտական խորհրդի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

(Զեկ.՝ գիտական քարտուղար, դոցենտ Մ.Ռ.Ասատրյան)

4.ՀՖԿՍՊԻ «ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները» պարբերական, Պրակ Ա տպագրության մասին:

(Զեկ.՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆեսոր
Ա.Ա.Գրիգորյան)

5.Անկախ աուդիտորական եզրակացության քննարկում:

(Զեկ.՝ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա.Գրիգորյան)

6. Մարմնամարզության և սպորտային պարերի ամբիոնի ասիստենտ Ս.Գալստյանին
դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

(Ձեկ.՝ գիտական քարտուղար, դոցենտ Մ.Ռ.Ասատրյան)

7.«Մարզաշխարհ» թերթում ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի թափուր
պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին:

(Ձեկ.՝ մրցույթային հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ս.Հովեյան)

1. Հ.Աղաբաբյան – դոցենտ կ.գ.թ.
2. Մ.Գասպարյան – ասիստենտ կ.գ.թ.
3. Կ.Դանիելյան - դոցենտ
4. Ն.Զաքարյան - դոցենտ տ.գ.թ.
5. Կ.Ղուլյան - դոցենտ տ.գ.թ.
6. Մ.Ճշմարիտյան - դոցենտ կ.գ.թ.
7. Ն. Տեր-Մարգարյան - դոցենտ մ.գ.թ.
8. Լ.Ստեփանյան – դոցենտ կ.գ.թ.

8.Ինստիտուտի աշխատակիցների կողմից կատարած լրացուցիչ ծառայությունների
վարձավճարների չափերի մասին:

(Ձեկ.՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր
Ա.Ա.Գրիգորյան)

9.Հրատարակչական հանձնաժողովի առաջարկությունների մասին:

(Ձեկ.՝ հանձնաժողովի նախագահ պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյան)

1.ԼՄԵՑԻՆ՝ պրակտիկայի և կարիերայի բաժնի պետ Մ.Բարբարյանին: Նա
ներկայացրեց մանկավարժական պրակտիկայի արդյունքները:

(Ձեկուցումը կցվում է)

Ելույթ ունեցան՝ մարզախաղերի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Հ.Մելքոնյանը, ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյանը, ռեկտոր պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը: Նրանք նշեցին պրակտիկայի անցկացման պատշաճ մակարդակը և բարձր արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Հաստատել մանկավարժական և կլինիկական պրակտիկաների արդյունքները

2. Հաստատել գիտական խորհրդի որոշումը:

2.ԼՍԵՑԻՆ՝ 2019թ. ընդունելության քննությունների պատասխանատու քարտուղար պրոֆեսոր Կ.Բաբայանին: Նա ներկայացրեց ընդունող հանձնաժողովի կատարած աշխատանքները:

(Տեղեկանքը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

3.ԼՍԵՑԻՆ՝ գիտական քարտուղար, դոցենտ Մ.Ռ.Ասատրյանին: Նա ներկայացրեց գիտական խորհրդի աշխատանքային պլանը:

(Աշխատանքային պլանը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել գիտական խորհրդի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանը:

4.ԼՍԵՑԻՆ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյանին: Նա առաջարկեց երաշխավորել տպագրության համար ՀՖԿՍՊԻ պարբերական, Պրակ Ա:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել տպագրության համար ՀՖԿՍՊԻ հիմնադրամի «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները» պարբերական, Պրակ Ա

5.ԼՍԵՑԻՆ՝ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա.Գրիգորյանին: Նա ներկայացրեց անկախ աուդիտորական եզրակացությունը:

(Զեկուցումը կցվում է)

Ելույթ ունեցան՝ ռեկտոր պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը, պրոֆեսոր Հ.Մելքոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

6.ԼՍԵՑԻՆ՝ գիտական քարտուղար, դոցենտ Մ.Ռ.Ասատրյանին: Նա ներկայացրեց Ս.Գալստյանի հիմնական տվյալները, որոնք թույլ են տալիս նրան շնորհելու դոցենտի գիտական կոչում:

(Զեկույցը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել ԲՈԿ առջև մարմնամարզության և սպորտային պարերի ամբիոնի ասիստենտ Սամվել Գալստյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

7.ԼՍԵՑԻՆ՝ մրցույթային հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ս.Հովեյանին: Նա ներկայացրեց մրցույթին մասնակցող թեկնածուների վերաբերյալ հանձնաժողովի կարծիքը:

(Մրցույթային հանձնաժողովի եզրակացությունը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ մրցույթին մասնակցող բոլոր թեկնածուներին թողնել փակ քվեարկության ցուցակներում:

Հաշվիչ հանձնաժողով՝

Յու. Գրիգորյան

Գ. Հայրապետյան

Ա. Նուշիկյան

Գիտական խորհրդի 34 անդամներից քվեարկությանը մասնակցել է 31-ը:

Քվեարկության արդյունքները՝

Կողմ Դեմ Անվավեր

քվեաթերթիկ

Աղաբաբյան Հ.Ռ. – դոցենտ	31	---	---
Ստեփանյան Լ.Ս. - դոցենտ	31	---	---
Դանիելյան Կ.Գ. - դոցենտ	31	---	---
Տեր-Մարգարյան Ն.Գ. - դոցենտ	31	---	---
Ճշմարիտյան Մ.Վ. - դոցենտ	31	---	---
Ղուլյան Կ.Է. – դոցենտ	31	---	---
Զաքարյան Ն.Յու. - դոցենտ	31	---	---
Գասպարյան Մ.Հ. – ասիստենտ	31	---	---

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել քվեարկության արդյունքները:

ՑԼՍԵՑԻՆ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյանին: Նա ներկայացրեց իր զեկուցագիրը աշխատակիցների լրացուցիչ ծառայությունների վճարման վերաբերյալ:

(Զեկուցագիրը կցվում է)

Ելույթ ունեցան՝ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Հ.Բաբայանը, ռեկտոր պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը: Նրանք առաջարկեցին սահմանել վարձավճարներ որոշ գործառույթների դիմաց, հաշվի առնելով այլ ԲՈԻՀ-երի նմանատիպ ծառայությունների դիմաց վարձավճարների հաստատված գները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ՀՖԿՍՊԻ աշխատակիցների կողմից լրացուցիչ ծառայությունների համար հաստատել վարձավճարներ հետևյալ գործառույթների դիմաց.

- Մենագրությունների և ուսումնական ձեռնարկների տպագրության երաշխավորագիր – 40000 դրամ:
- Ատենախոսությունների առաջատար կազմակերպության կարծիք՝ գիտ. դոկտոր – 60000 դր., գիտ. թեկնածու – 35000 դր.:
- Գիտական հոդվածների և սեղմագրերի կարծիք – 10000 դր.:

Հանրապետության կոնստրցումի անդամ ԲՈՒՀ-երի համար ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի գրախոսականները իրականացվում են փոխադարձ պայմանավորվածության սկզբունքով (անվճար) աշխատանքների քանակով, հավասարության սկզբունքով:

9.ԼՍԵՑԻՆ՝ հրատարակչական հանձնաժողովի նախագահ պրոֆեսոր

Ա.Ա.Գրիգորյանին: Նա ներկայացրեց հանձնաժողովի առաջարկությունների աշխատակիցների ձեռնարկները տպագրելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝1. Համաձայնվել հրատարակչական հանձնաժողովի առաջարկությունների հետ:

2. Երաշխավորել տպագրության համար ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոնի դասախոս Գ.Գրիգորյանի «Դասացուցակների բիլաթերա ուսուցման մեթոդիկան ֆիզիկական կուլտուրայի դասերին» ուսումնական ձեռնարկը (50 էջ)

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՅԵՆՏ՝

Վ. Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Մ. Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ